



Ագդաբարույթեան Trumpet's Sound **փող**

51-ՐԴ ՏԱՐԻ, ԱՆՏՐԱՆԻԱ
ՅՈՒՆՈՒՆ - ՓԵՏՐՈՒՆ 2020

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»
երկամսյա հոգեւոր բերք

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույումեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակութիւն

Տերը մինչեւ այս տեղ մեզի օգնեց . . . 3

Հովիւ Հրաչ Գույումեան

Իսսահակ զոհաբերութիւնը 5

Տոն Սրորմըր

«Այն մարդը դու ես» 9

Քաղուած

Ոսկէ կանոն 11

Ռաֆֆի Զափարեան

Յիսուսը կը բժշկէ հիւանդներուն . . . 14

Հովիւ Հրաչ Գույումեան

ԱՄՄ-ի աղօթքի նիւթեր

- Աղօթէ՛ք Սեւահողերի, Երեւանի, Կիւմրիի եւ Վանաձորի Աստուածաշնչեան սերտողութեան խմբակներու համար:
- Աղօթէ՛ք հիւանդներու անհրաժեշտ բժշկական օգնութեան համար:
- Աղօթէ՛ք աջակցութեան կարիք ունեցող շատ աղքատ ընտանիքներու համար:
- Աղօթէ՛ք մեր յաջորդ բեռնարկող Հայաստան ուղեւորելու անհրաժեշտ գումարներու հայթայթման համար:
- Աղօթէ՛ք մեր գործակիցներուն եւ անոնց ընտանիքներու անվտանգութեան համար:

Կազմի նկարը՝ ըմտրուած:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

Տէրը մինչեւ այս տեղ մեզի օգնեց

**«Այն ատեն Սամուէլ քար մը առաւ եւ Մասփայի ու Սենի մէջտեղ կանգնեցուց ու անոր անունը Աբենեզեր կոչեց, ըսելով.
«Տէրը մինչեւ այստեղ մեզի օգնեց»» (Ա Թագ. 7:12)**

Արդեօ՞ք կրնանք քար մը վերցնել եւ նոյնը ընել: Մենք կը յիշենք Տէրոջ բարութիւնը մեր նկատմամբ. շատերը մեզի հետ սկսեցին տարին, բայց այսօր այստեղ չեն, շատերը առողջ սկսեցին, բայց հիւանդութիւնով աւարտեցին, շատերը հարստութիւնով սկսեցին, բայց կորուստներով աւարտեցին:

Հաւատացեալի կեանքի իւրաքանչիւր պարագայ Աստուծոյ կողմէ թոյլատրուած է: Անցեալ տարուայ վիճակագրութիւնները ցոյց կուտան, թէ ունեցած ենք 300 բնական աղէտ, հրդեհ, երաշտ, անձրեւ, երկրաշարժեր, հրաբուխներ, աւելի քան 40 միլիարդ տոլարի վնաս, 5000 զոհ և իրենց տունները կորսնցուցած 22 միլիոն մարդ:

Տէրը մինչեւ այս տեղ մեզի օգնեց

Անցեալ տարուայ մասին խորհելով կը գիտակցինք, որ շատ սխալներ թոյլ տուած ենք, սակայն որպէս հաւատացեալներ մենք պէտք է միշտ եւ ամէն բաներու համար շնորհակալութիւն յայտնենք: Մենք պէտք է ամէն բաները Աստուծոյ տեսանկիւնէն նայինք եւ ինքներս մեզ հարց տանք, թէ ի՞նչ կրնանք սորվիլ այս ամէնէն: Արդեօ՞ք կը տեսնենք Աստուծոյ ձեռքը ինձի պատահածին մէջ, արդեօ՞ք Քրիստոսի մէջ աճելու համար էր...:

Յիշէ՛ք, որ Իսրայէլը 40 տարի քալեց ցերեկը առաջնորդուելով՝ ամալի սիւնով, իսկ գիշերը՝ կրակէ սիւնով, բայց բոլոր իսրայէլացիները ձախողեցան իրենց ընթացքին մէջ: Յիշէ՛ք Մովսէսի խօսքերը. «Եթէ Քու ներկայութիւնդ մեզի հետ չերթայ, մեզ այս տեղէն մի՛ հաներ» (Ե-լից 33:15):

Հաւատացեալները ինչպէ՞ս պէտք է դիմաւորեն նոր տարին.

1. Տէրոջը վստահելով

«Եւ հիմա՝ ահա՛ ես հոգիով կապուած՝ Երուսաղէմ կ'երթամ եւ հոն

ինծի ի՞նչ պիտի պատահի՝ չեմ գիտեր» (Գործք 20:22): «Եղբայրներ, ես չեմ սեպեր թե բռներ եմ: Բայց յիշեցնեմ թե ետեւի եղածները մոռցած եմ ու առջեւի եղածներուն կը դիմեմ» (Փիլիպ. 3:13):

2. Ինքնաքննութեամբ

«Փորձէ՛ զիս, ո՛վ Աստուած ու գիտցի՛ր իմ սիրտս. զիս քննէ՛ ու գիտցի՛ր իմ մտածումներս եւ նայէ՛ թէ արդեօք չար ճամբու մէջ եմ եւ զիս դէպի յաւիտենական ճամբան առաջնորդէ» (Սաղ. 139:23-24):

3. Մեր ճամբաները փոխելով

«Քանզի եթէ ձեր ճամբաներն ու գործերը ճշմարտապէս ուղղէք եւ եթէ մարդուն ու անոր ընկերին մէջտեղ իրաւունքը զգուշութեամբ գործադրէք, պանդուխտին, որբին ու որբեւարիին զրկանք չընէք ու անմեղ արիւն չթափէք եւ օտար աստուածներու ետեւ չերթաք որ ձեզի չարիքի պատճառ կ'ըլլայ, այն ատեն այստեղ՝ ձեր հայրերուն տուած երկրիս մէջ՝ պիտի բնակեցնեմ ձեզ յաւիտեանս յաւիտենից» (Երեմ. 7:5-7):

«Արդ՝ կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, Աստուծոյ ողորմութիւնովը, որ ձեր մարմինները ընծայէք կենդանի զոհ մը՝ սուրբ, Աստուծոյ հաճելի, որ է ձեր բանատր պաշտօնը: Եւ մի՛ կերպարանիք այս աշխարհին կերպարանքովը, հապա ձեր մտքին նորոգութիւնովը նորոգուեցէ՛ք, որպէս զի քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը, որ բարի ու հաճելի եւ կատարեալ է» (Հռովմ. 12:1-2):

4. Նոր որոշումներ կայացնելով

«Երբ աջ կողմը կամ ձախ կողմը խտտորելու ըլլաս, քու ականջներդ ետեւեղ խօսք մը պիտի լսեն, որ կ'ըսէ. «Ասիկա է ճամբան, ասկէ քալեցէք»» (Ես. 30:21):

«Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է ու իմ շաւղներուս՝ լոյս» (Սաղ. 119:105):

5. Յիսուսին յուսալով

«Արդ՝ յուսոյ Աստուածը ձեզ լեցնէ կատարեալ ուրախութիւնով ու խաղաղութիւնով՝ ձեր հաւատքին համաձայն, որպէս զի ձեր յոյսը առատանայ Սուրբ Հոգիին զօրութիւնովը» (Հռովմ. 15:13):

«Օրհնեալ է Աստուած՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսին Հայրը՝ որ իր առատ ողորմութեամբ մեզ նորէն ծնաւ կենդանի յոյսին համար՝ Յիսուս Քրիստոսին մեռելներէն յարութիւն առնելովը» (Ա Պետ. 1:3):

Հ. Գ.

Իսահակի զոհաբերութիւնը

Կարդացէ՛ք Ծննդոց 22-ը

Իսահակի զոհաբերութիւնը Աբրահամի կեանքի ամենայայտնի պատմութիւններէն մէկն է: Այն նաեւ այն իրադարձութիւնն է, որտեղ Աբրահամի հաւատքը մեծապէս կը զօրանայ:

Պատմութիւնը կը սկսի անորոշ ժամանակի հետեւեալ արտայայտութեամբ. «Ու եղաւ որ այս բաներէն ետքը»: Մենք յստակ չենք գիտեր, թէ երբ էր, սակայն վստահ գիտենք, որ այս ամէնը եղան Իսահակի մեծնալէն ետքը, քանի որ պատմութենէն կը հասկնանք, որ ան բաւական մեծ էր կատարուածը հասկնալու համար: Աստուած Աբրահամին երեսօց՝ զինք փորձելու համար: Աստուած Աբրահամին հրամայեց իր որդի Իսահակին զոհաբերել, որպէս ողջակէզ այն լեռներէն մէկուն վրայ, որ Ինք Աբրահամին ցոյց պիտի տար:

Աստուած Իսահակին կը նկարագրէ, որպէս Աբրահամի սիրած մէկ հատիկ որդին: Ի՞նչ կը նշանակէ ասիկա: Մեծ նշանակութիւն ունի Իսահակի՝ Աբրահամի միակ սիրելի որդի ըլլալը: Մենք գիտենք, որ Աբրահամը ուրիշ որդիներ եւս ունէր. Իսմայէլի մասին արդեն շատ բան խօսուած է, իսկ 25-րդ գլխուն մէջ կը կարդանք Քետուրայէ ունեցած իր միւս որդիներու մասին: Այնուամենայնիւ, Իսահակը յատուկ տեղ ունէր Աբրահամի կեանքին մէջ. ան «մէկ հատիկ որդին» էր:

Ի՞նչ մտքեր անցան Աբրահամի մտքէն, երբ Աստուած հրամայեց զինք իր միակ որդին զոհաբերել: Ան տարիներ սպասած էր Իսահակի լոյս աշխարհ գալուն: Աստուած իրեն ըսած էր, որ խոստումները Իսահակի միջոցով պիտի կատարուին: Բայց Իսահակը դեռ ամուսնացած չէր, զաւակներ չունէր, որոնց միջոցով խոստումները պիտի իրական-

նանային: Եթե Աբրահամը իր միակ որդին զոհաբերեր, ապա ի՞նչ պիտի ըլլար Աստուծոյ տուած բոլոր խոստումներու ճակատագիրը:

Այնուամենայնիւ, Աբրահամը անմիջապէս հնազանդեցաւ: Սուրբ-գրային հատուածին մէջ ոչ մէկ նշոյլ չկայ, որ Աբրահամը հարցա-քննեց Աստուծոյ, կամ կասկածներ ունեցաւ իր ընելիքի վերաբերեալ: Պարզապէս, յաջորդ օրը, վաղ առաւօտեան Աբրահամը ելաւ ու իր իշուն համետը դրաւ, եւ իրեն հետ երկու ծառայ ու իր Իսահակ որդին առաւ, նաեւ ողջակէզի համար անհրաժեշտ իրերը՝ փայտը, դանակը, կրակը, ու ճամբայ ելաւ այն տեղը, որտեղ Աստուած իրեն ցոյց պիտի տար:

Հետաքրքրական է, թէ Սառայի մտքով ինչեր անցան, երբ փոքր խումբը ճամբայ ելաւ: Եթե կը հետաքրքրեն մեզ Աբրահամի մտքերը, ապա երկար փնտռելու կարիք չունինք. երրորդ օրը Աբրահամ կը խօսի իր ծառաներուն հետ: Ան տեսած էր այն վայրը, որտեղ Աստուած կ'ուզէր որ երթար: Ան իր երկու ծառաներուն ըսաւ. «Դուք իշուն հետ հոս մնացէ՛ք, եւ ես ու տղան մինչեւ հոն երթանք, ու երկրպագութիւն ընենք, եւ նորէն ձեզի դառնանք»: Աբրահամ կասկած չունէր պատահելիքի վերաբերեալ: Իսահակի հետ միասին պիտի վերադառնային ծառաներուն քով:

Եբրայեցիներուն ուղղուած նամակի հեղինակը այսպէս կը նկարագրէ Աբրահամի վերլուծութիւնը.

«Հաւատքով Աբրահամ իր փորձուած ատենը Իսահակը պատարագ մատուցանեց. թէւ ինք խոստում առած էր, բայց իր մէկ հատիկ որդին կը մատուցանէր, որուն համար ըսուած էր. «Իսահակով քեզի սերունդ պիտի տրուի», քանզի Աբրահամ կը մտածէր թէ Աստուած կարող է մեռելներէն ալ Իսահակը յարուցանել, ուստի որպէս նախատիպար ընդունեց զանիկա» (Եբր. 11:17-19):

Աբրահամն ու Իսահակը սկսեցին բարձրանալ այն վայրը, որտեղ Աստուած ըսած էր Աբրահամին, որ երթար: Այդ ընթացքին. ինչ-որ պահին, Իսահակը հարց ուղղեց հօրը: Ան կը տեսնէր փայտն ու կրակը, բայց զոհաբերութիւն ընելու գառ չունէին: Ուստի կը հարցնէ. «Ողջակէզ ըլլալու գառը ո՞ր է»: Այս հարցը ցոյց կուտայ, որ Իսահակը ծանօթ էր զոհաբերութիւն ընելու սովորութեանը: Նախորդ յօդուած-

ներուն մէջ անդրադարձած էինք, որ Աբրահամի կեանքը կը բնորոշուէր վրանով ու զոհասեղանով: Հարցին ի պատասխան Աբրահամ կ'ըսէ, որ Աստուած իրեն ողջակէզ ըլլալու գառը պիտի ապահովէ:

Աբրահամի պատասխանը տարբեր մեկնութիւններ ունի: Սովորական մեկնությունն այն է, որ Աստուած պիտի տրամադրէ զոհաբերութեան գառը: Եւ այդպէս ալ եղաւ, Աբրահամ նայեց ու խիտ մացառներուն մէջ եղջիրներէն բռնուած խոյ մը կար: Այսպէս Աստուած Իր համար գառ ապահովեց: Բայց հատուածը կարելի է նաեւ այլ կերպ ընթերցել. Աստուած Ինքն Իրեն որպէս գառ տրամադրեց: Մենք ոչ թէ պարզապէս կը մտածենք այդ մէկ օրուայ իրադարձութեան մասին, այլ՝ առաջ նայելով կը տեսնենք այն ժամանակը, երբ Աստուած Յիսուս Բրիստոսի Անձով աշխարհ եկաւ եւ Ինքն Իրեն, որպէս Աստուծոյ Գառ տրամադրեց:

Ասոր մասին քարոզեց Յովհաննէս Սկրտիչը: Երբ տեսաւ Յիսուսին, որ իրեն կուգար, ան ըսաւ. «Ահա Աստուծոյ Գառը, որ աշխարհի մեղքը կը վերցնէ»: Յովհաննէս Սկրտիչը, ինչպէս բոլոր խորայնացիները, ծանօթ էին զոհաբերական համակարգին, մեղքերը քաւելու համար զոհեր բերելուն: Իսրայելացիի մեղքը կրնար ծածկուիլ, քանի որ անմեղ զոհը վճարեց մեղատրի պատիժը:

Ասոր մէջ կարեւոր հոգեւոր ճշմարտութիւն մը կայ: Մեղքի վարձքը մահ է: Մեղքի պատիժը մահ է: Եւ կրնամ իմ մեղքերու համար մեռնիլ, բայց ատոր արդիւնքը յաւիտենական մահը կ'ըլլայ, այսինքն՝ յաւիտենական բաժանում Աստուծոյ ներկայութիւնէն: Բայց հնարաւոր է, որ ուրիշ մէկը վճարէ իմ պատիժս, սակայն այն պայմանով, որ ան պէտք է ոչ մէկ մեղք գործած ըլլայ, որու համար քաւութեան կարիք ունենայ: Եւ ահա, թէ ինչու Տէր Յիսուս Բրիստոսը Աստուծոյ Գառ կոչուեցաւ: Ան է Աստուծոյ Գառը, ով վերցուց աշխարհի մեղքը:

Փոխանորդական մահը ճշմարտութիւն մըն է, որը ցուցադրուեցաւ Մորիայ լեռան վրայ: Իսահակի համար փոխարինող գտնուեցաւ. իր փոխարէն խոյը զոհուեցաւ: Մենք արժանի էինք յաւիտենական մահուան, բայց Աստուծոյ Գառը դարձաւ մեր փոխարինողը: Մենք ազատ արձակուեցանք Տէր Յիսուս Բրիստոսի հանդէպ եղած հաւատքի միջոցով:

Երբ Աբրահամը դանակը բարձրացուց Իսահակին սպաննելու համար, Տէրոջ Հրեշտակը երկնքէն կանչեց ըսելով. «Աբրահամ, Աբրահամ»: Անուան կրկնութիւնը սովորական չէր, ինչը կը հրաւիրէր հրատապ ուշադրութիւնը: Երբ Աբրահամը պատասխանեց, Հրեշտակը ըսաւ. «Հիմա գիտցայ, որ Աստուծոմէ կը վախճաս, որովհետեւ քու մէկ հատիկ որդիդ Ինծոմէ չխնայեցիր»: Աբրահամը կատարելապէս հնազանդեցաւ Տէրոջը:

Հետաքրքրական է, թէ ո՞վ էր Տէրոջ Հրեշտակը (կամ հրեշտակը): Սկիզբը գուցէ խորհինք, թէ ան հրեշտակ մըն էր, բայց յետոյ կը տեսնենք, որ Ան կը խօսի որպէս Աստուած. «... Մէկ հատիկ որդիդ Ինծոմէ չխնայեցիր»: Ան այն Անձն էր, ով երեսաց Աբրահամին, երբ վերջինս օրուան տաք ատենը նստած էր իր վրանի մուտքին մօտ: Տէր Յիսուս Քրիստոսը Հին Կտակարանի Ժամանակներուն մէջ յաճախ յայտնւում է, որպէս Տէրոջ Հրեշտակը:

Ինչո՞ւ համար Աբրահամ ենթարկուեցաւ այս փորձութեանը: Աստուած գիտէր Աբրահամի հաւատքի գործութիւնը, բայց Աբրահամը չէր գիտէր: Այսպէս ան իմացաւ իր ունեցած հաւատքի գործութեան չափը: Եթէ Աբրահամը այս կերպով չփորձուէր, ապա մենք երբեք պիտի չգիտնայինք անոր հաւատքի գործութեան մասին: Մեր առջեւ դրուած է շատ զօրաւոր հաւատքի օրինակ մը:

Աբրահամը պատրաստ էր իր որդին զոհաբերել: Ան տեղեակ չէր, որ Աստուած թոյլ պիտի չտար իրեն Իսահակին սպաննել: Շատ բաներէ անտեղեակ ըլլալով հանդերձ Աբրահամը Աստուծոյ վստահեցաւ, ով խոստացած էր Իսահակի միջոցով Իր խոստումները կատարել: Ան գիտէր, որ Աստուած ըսած էր, որ Իսահակի միջոցով իրեն սերունդ պիտի ապահովէր, եւ որպէսզի Աստուած կատարէր Իր խոստումը, ուրեմն Ան Իսահակին մեռելներէն յարութիւն առնել պիտի տար: Աստուած Աբրահամին խոստում տուած էր, եւ ան կասկած չունէր, որ Աստուած հաւատարիմ պիտի չգտնուի Իր խոստումներուն մէջ: Աբրահամի միակ գործը Աստուծոյ վստահելն ու Իրեն հնազանդելն էր:

Տոն Սթորմըր



«Այն մարդը դուրս ես» (Բ Թագ. 12:7)

Ատոնք էին այն բառերը որոնք ելան Նաթան մարգարեին բերնէն արթնցնելու համար Դաւիթը իր սոսկալի մեղքին վրայ: Սատանային մեծ գործն է քնացնել մեղաւորները ու աշխատիլ որ մոռնան անոնք այն չար եւ զգուելի մեղքերը որ գործած են իրենց Արարչին եւ Աստուծոյն դէմ:

Երբոր Հուայթֆիլտ Աստուծոյ նուիրեալ եւ եռանդուն ծառան կը քարոզէր Բլիմաութի մէջ 1743 թ.-ին, շատեր կը հալածէին ու կ'ուզէին սպաննել զայն: Երբոր կը քարոզէր ան օր մը, Թէնըր անունով նաւահիւսն մը, հեռուէն կը լսէր անոր ձայնը: Ասիկա իր ընկերներէն 5-6 հատը հետը առնելով ուզեց երթալ ու վնասել քարոզիչը այն տեղէն ուր կեցած էր: Ասոր համար իրենց գրպանները քարերով լեցուցին: Սակայն երբոր մօտեցաւ ու տեսաւ թէ ինչպէս թախանձանօք կ'աղաչէր Հուայթֆիլտ մեղաւորներուն որ Քրիստոսի գան, հիացմամբ լեցունեցաւ եւ իր որոշումը չկրցաւ գործադրել: Անիկա իր տունը գնաց խորապէս ազդուած ըլլալով: Հետեւեալ իրիկուն մօրէն եկաւ քարոզաժողովին: Հուայթֆիլտ կը խօսէր Փրկիչը խաչողներուն մեղքին վրայով: Անոնց մեղքին վրայ երկար խօսելէ յետոյ, ուշի ուշով նայեցաւ Թէնըրի վրայ ու մեծ յուզումով կանչեց. «Այն մարդը դուրս ես»: Այս բառերը ուժեղ ազդեցին Թէնըրին: Ան զգաց իր մեղքերուն սոսկալի մեծութիւնը, եւ իր սրտին ցաւով կանչեց. «Աստուած, ողորմէ ինծի մեղաւորիս»:

Յետոյ քարոզիչը սկսաւ հռչակել Յիսուսի ձրի եւ առատ շնորհքը զոր Ինքը հրամայեց քարոզել ճիշդ անոնց որոնք սպաննեցին Ջինքը: Այս լսելով, Թէնըր քաջալերուեցաւ եւ Քրիստոսի յանձնուեցաւ: Այո, ան տեսաւ որ մեղաւորներու չարագոյնին համար իսկ Աստուծոյ շնորհքը շատ առատ է:

Սիրելի ընթերցող, արդեօք Աստուծոյ Խօսքին մէջ կարդացե՞ր ես անոնց վրայով որոնք Աստուծոյ թշնամի են (Յակ. 4:4), որոնք միայն մարմինին համար կը սերմանեն (Գաղ. 6:8), զԱստուած չեն ճանչնար,

ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանին չեն հնազանդիր (Բ Թես. 1:8), որոնց վերջը կորուստ է (Փիլիպ. 1:8), որոնք պիտի պատժուին յաւիտենական սատակումով Տէրոջը երեսէն, ու Անոր զօրութեանը փառքէն (Բ Թես. 1:9), որոնց բաժինը պիտի ըլլայ կրակով ու ծծումբով վառած լիճին մէջ (Յայտ. 21:8): Երբոր կը կարդաս եւ կամ կը լսես այս բաները, կը մտաբերե՞ս, որ «Այն մարդը դուն ես»:

Տես եւ խորհէ՛ ռ՞որ ես: Նայէ՛, որո՞ւն դէմ մեղանշած ես եւ տակաւին կը մեղանշես: Ան որ երկինքի մէջ եւ երկրի վրայ բոլոր իշխանութիւնը ունի, որ ամէն բան կը տեսնէ, գիտէ եւ ամէն տեղ ներկայ է, որ կարողութիւն ունի քեզ յաւիտենական կրակը նետելու, որուն առջեւ անպատճառ պիտի երեւնաս: Ո՛հ, դուն Անոր դէմ է որ կը մեղանշես, մեղաւոր, այս խորհա՞ծ ես եւ գիտե՞ս»:

Սակայն յիշէ՛, որ Տէրը տակաւին կը սիրէ քեզ անպատմելի սիրով մը եւ դրկած է Իր սիրելի Որդին որպէսզի քեզ, կորսուածդ փնտռէ ու փրկէ (Գուկ. 19:10): Անկէկա պատրաստ է ներելու: «Ամէն մեղք ու հայհոյութիւն պիտի ներուի մարդոց» (Մատթ. 12:31): Իր շնորհաց գերազանցութիւնը ցուցնելու համար կը խոնարհի ամենէն վար եւ կը փրկէ ամենէն պիղծ, թշուառ, յուսահատ եւ ողորմելի մեղաւորները, առանց նկատելու անոնց մեղքերուն բազմութիւնը, ծանրութիւնը եւ չարութիւնը: Շատեր, այո, շատեր կուզան Արեւելքէն, Արեւմուտքէն, Հիւսիսէն եւ Հարաւէն Գառնուկին երկնային երգը երգելու, որոնք Աստուծոյ ձրի շնորհքովը արդարացած են եւ իրենց հանդերձները լուալով ձիւնէ աւելի ճերմակ ըրած են: Անոնց ատենօք սատանայի ծառայութեան տակ սեւցած, կուրացած եւ գարշելի էին, հիմա կուզան սուրբերուն հետ ժառանգակից ըլլալու եւ արեւու պէս փայլելու (Մատթ. 13:43):

Ով քնացող, թշուառ մեղաւոր որ կորստեան եզերքին վրայ կը թափառիս, ճիշդ հիմա Յիսուսին կանչէ:

Քաղուած՝ «Ընտիր ժողովածու հոգեւոր
պատմութիւններուն» գիրքէն



Ոսկե կանոն

Մատթ. 7:7-ի մեջ Տէր Յիսուսը կ'ամփոփէ Լեռան քարոզը: Ան Իր քարոզը սկսաւ, երբ հաւաքուած ամբոխին սորվեցնելու համար լեռը բարձրացաւ (Մատթ. 5:1-2): Իր քարոզին մէջ ընդգծեց այն չափանիշները, որոնցով Իր հետետորդները պէտք է ապրին՝ սկսելով Երանելիներէն (Մատթ. 5:3-12) մինչեւ սպաննութիւն, շնութիւն, ամուսնալուծութիւն, վրէժխնդրութիւն չընելը, նաեւ անդրադարձաւ թշնամիներու, երկնաւոր գանձեր դիզելու եւ այնուհետեւ մարդկանց անարդարացիօրէն չդատելու նիւթերուն (Մատթ. 7:1-6): Այս չափանիշներուն համաձայն ապրիլը ոչ միայն դժուար, այլեւ անհնար է՝ եթէ Աստուած չօգնէ մեզի: Տէրը գիտէ, որ մենք մեր ուժերով չենք կրնար այդպիսի կեանք մը ապրիլ:

Այդ պատճառով Յիսուսը նաեւ սորվեցուց մեզի օգնութիւն խնդրել Հօրմէն: Եթէ ես եւ դուք խնդրենք, փնտռենք ու դուռը զարնենք, ապա Աստուած խոստացած է օգնել եւ մեզ այդ չափանիշին համապատասխան ապրելու կարողութիւն, ուժ եւ կամք տալ (Մատթ. 7:8): Մարդիկ յաճախ սխալ կը մեկնաբանեն սուրբգրային այս հատուածը: Այստեղ Յիսուսը մեզ չի սորվեցնէր, թէ Աստուծմէ ինչ որ խնդրենք Ան պիտի տայ մեզի: Աստուած կադանդ պապա չէ, որուն մամակ կրնանք գրել ու ակնկալել, որ Ան կուտայ այն ինչ խնդրեցինք Իրմէ (մեքենայ, տուն, ամուսին, աշխատանք եւ այլն): Այս հատուածը յատուկ կերպով կը սորվեցնէ մեզ հոգեւոր բաներու համար աղօթելը, մասնաւորապէս՝ Աստուծոյ չափանիշներուն համապատասխան քրիստոնէական կեանք ապրելու կարողութիւնը (տե՛ս նաեւ Դուկ. 11:13-ը): Եւ Սուրբ Հոգին կ'օգնէ, կ'առաջնորդէ, կը սորվեցնէ ու կը յիշեցնէ մեզ Տէր Յիսուսի Լեռան քարոզի մէջ սորվեցուցածները, որպէսզի կարողանանք Աստուծոյ չափանիշներուն համաձայն կեանք մը ապրիլ:

Այնուամենայնիւ, մեր խնդրածը ստանալու համար կան որոշ պայմաններ: Առաջին՝ այս հոգեւոր օրհնութիւնները ստանալու համար, այսինքն՝ Աստուծոյ չափանիշին համապատասխան կեանք ապրելու կարողութիւնը ունենալու համար, նախ անձը պէտք է Աստուծոյ հետ յարաբերութիւն ունենայ (Հայր եւ որդի փոխյարաբերութիւն, Մատթ.

7:11): Միայն Քրիստոսին, որպէս Փրկիչ ընդունելու շնորհիւ անձը Աստուծոյ հետ յարաբերութիւն կրնայ ունենալ ու զինք իր Երկնաւոր Հայրը կոչել (Յովհ. 1:12): Ստանալու համար անձը նախ պէտք է խնդրէ, սակայն միայն զաւակը կրնայ խնդրել իր Երկնաւոր Հօրմէն:

Հոգեւոր օրհնութիւններ ստանալու յաջորդ պայմանը՝ խնդրելն է, որը այս հատուածի գլխաւոր միտքն է: Ասոր համար Յիսուսը երկրային հայրերու օրինակը տուաւ, հայրեր, որոնք կը կատարեն իրենց զաւակներուն խնդրանքները: Նմանապէս, մեզ պատուիրուած է՝ աղօթքով մեր Երկնաւոր Հօրմէն հոգեւոր օրհնութիւններ խնդրել: Իրականութեան մէջ, ամէնակարեւոր բաները, որոնք մեր Երկնաւոր Հօրմէն կը խնդրենք՝ հոգեւոր բաներն են: Ասիկա է պատճառը, թէ ինչու Յիսուս ըսաւ. «Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը» (Մատթ. 6:33): Առաքեալները նոյնպէս ասիկա սորվեցուցին. Հակ. 1:5-ը՝ հոգեւոր իմաստութիւն խնդրել, Եփես. 1:16-19-ը՝ հոգեւոր խորաթափանցութիւն եւ սրտի աչքերու լուսաւորութիւն, Կող. 1:9-10-ը՝ Աստուծոյ գիտութեամբ լեցուիլ, Հռովմ. 10:1՝ մարդկանց փրկութիւնը, Ա Տիմ. 2:1-2՝ իշխանաւորներու համար, Եփես. 6:19-ը՝ համարձակ քարոզելու կարողութիւն, եւ այլն...

Հոգեւոր օրհնութիւններ ստանալու երրորդ պայմանը՝ փնտռելն է: Միայն աղօթքը կամ միայն խնդրելը բաւարար չեն: Մենք պէտք է խնդրենք, այսինքն՝ աղօթենք, բայց պէտք է նաեւ փնտռենք: Մենք պէտք է փնտռենք Իր կամքը, հրահանգները, պատուիրանները, գիտութիւնը, որը կարող ենք ստանալ միայն Աստուծոյ Խօսքէն (Բ Պետ. 3:18, Հռովմ. 15:4, Բ Տիմ. 3:16): Մենք հոգեւոր օրհնութիւններ չենք ստանար, եթէ Աստուածաշունչ չենք կարդար:

Աստուծմէ հոգեւոր օրհնութիւններ ստանալու վերջին պայմանը՝ դուրը զարնելն է: Մենք պէտք է խնդրենք (աղօթենք), փնտռենք (Աստուածաշունչը սերտենք), բայց նաեւ պէտք է դուրը զարնենք: Դուրը զարնելը կը խորհրդանշէ հոգեւոր օրհնութիւններ ստանալու մեր փափաքի անկեղծութիւնն ու լրջութիւնը: Դուրը զարնելը կը մատնանշէ մեր վճռականութիւնը, հետեւողականութիւնը եւ առանց դադարի՝ Հօրմէն հոգեւոր օրհնութիւններ ստանալու մեր խնդրանքի մէջ յարատեւելը: Ասիկա ցոյց կուտայ, որ Աստուած մեր կեանքին մէջ առաջին տեղը կը գրաւէ, եւ որ ամէն բանէ առաւել հոգեւոր օրհնութիւններ կը

փափաքինք (Ղուկ. 11:5-13): Երբ այս պայմանները կը բաւարարուին, մեր Երկնատուր Հայրը կուտայ մեզ այն, ինչի կարիքը ունինք (Մատթ. 7:11):

Այնուհետեւ Յիսուսը Լեռան քարոզը (Մատթ. 5-7 գլուխները) եւ հոգեւոր օրհնութիւններ ստանալու համար խնդրելու, փնտռելու եւ դուռը զարնելու պատուէրը կ'ամփոփէ մէկ համարի մէջ՝ Մատթ. 7:12-ը: Այլ խօսքով՝ Յիսուսը կ'ըսէ մեզ. «Եթէ կ'ուզէք Աստուծոյ չափանիշներուն համաձայն ապրիլ եւ Իրմէ օգնութիւն կը խնդրեք, ապա պիտի կարողանաք այս համարի խօսքերուն համաձայն ապրիլ, այսինքն՝ ուրիշներու հետ վարուիլ այնպէս ինչպէս կ'ուզէք, որ ձեզի հետ վարուին»:

Նման ուսմունքի կարող ենք հանդիպիլ նաեւ այլ մշակոյթներու եւ կրօններու մէջ, ինչպիսիք են՝ Հրէականութիւնը, Հիմնադրւած եւ Պոստ-տայականութիւնը: Տարբերութիւնն այն է, որ այդ մշակոյթներուն մէջ այս գաղափարախօսութիւնը բացասական իմաստով ներկայացուած է. «Այն, ինչ չէք ուզէր, որ մարդիկ ընեն ձեզի, դուք նոյնպէս իրենց մի՛ ըրէք», կամ «Այն, ինչ կ'ատէք, ուրիշներուն մի՛ ըրէք»: Քանի որ չենք ուզէր, որ մարդիկ մեզի չարիք հասցնեն կամ ատեն ու վնասեն մեզ, ապա մենք նոյնպէս պէտք չէ իրենց այդպէս ընենք: Այսինքն՝ քանի դեռ մարդը ակտիվօրէն ուրիշներուն վնաս չի հասցներ, կամ անոնց չարիք չի ցանկանար, կամ անոնց պատահած չարիքի վրայ չ'ուրախանար, ուրեմն անձը մաքուր է օրէնքի առջեւ:

Այնուամենայնիւ, Տէր Յիսուսի սորվեցուցածը շատ տարբեր է: Բաւարար չէ ուրիշներուն չվնասելը, չարիք չցանկանալը կամ նոյնիսկ անոնց պատահած չարիքի վրայ չ'ուրախանալը: Բաւարար չէ ինչ-որ մէկուն անարդարացիօրէն չղատապարտելը: Յիսուսի սորվեցուցածը շատ տարբեր էր անոնց սորվածներէն. «Լսէր էք, որ ըսուեցաւ առաջիններուն... Բայց ես ձեզի կ'ըսեմ....»: Յիսուսը մեզի չսորվեցուց մեր ձեռքերը ծալել ու ըսել. «Ես աստուածաժախ եմ, ոչ ոքի չեմ վնասած, ոչ ոքի չարիք չեմ փափաքած կամ նոյնիսկ որևէ մէկուն պատահած չարիքի համար չեմ ուրախացած»: Յիսուսը կ'ըսէ մեզի. «Եթէ ակտիվօրէն բարիք չէք ընէր, ապա խախտած կ'ըլլաք Աստուծոյ պատուիրանը» (Մատթ. 7:12):

Բաւարար չէ հեռուէն հետեւիլ, թէ ինչպէս աշխարհը կը քանդուի,

չնայած մենք չենք ատոր պատճառը, բայց եթե ակտիվորեն չենք շարժուիր ինչ-որ կարիք մը լրացնելու, խնդիր մը լուծելու, կեանքը բարելավելու, աշխարհը՝ ապրելու համար աւելի լաւ վայր մը դարձնելու, եղբօր կամ քրոջ մը օգնութեան ձեռք մեկնելու, ճիշտը ընելու, Տէրոջը ծառայելու... ուրեմն մենք բասիվ ենք: Դժմարիտ սէրը բասիվ չէ, այլ՝ չափազանց ակտիվ: Երբ անձը Դժմարտապէս կը սիրէ, ան իր շրջապատի օգուտի համար ինչ-որ բան կը նախաձեռնէ: Յիսուսը չըսաւ ոչ ոքի չվնասենք, այլ՝ բարիք ընենք:

Կարեւոր է նաեւ նկատել, որ եթէ մեր սէրը ճշմարիտ է, ապա մենք բարիք կ'ընենք անկախ ուրիշները այդպէս կ'ընեն, թէ ոչ: Մենք պէտք է բարիք գործենք, ոչ թէ քանի որ այլ մարդիկ բարիք կ'ընեն: Բարիք գործելը կախումը չէ ուրիշներու արարքներէն այլ իմ ցանկութիւնէն, թէ ինչպէս կ'ուզեմ, որ մարդիկ ինծի հետ վարուին, եւ նոյնիսկ՝ եթէ այդպէս չեն վարուիր: Աստուած կատարեալ օրինակ թողեց: Ան Իր Որդին չուղարկեց, քանի որ մարդիկ բարի էին եւ Իրեն բարիք ըրին: Ան Իր Որդին տուաւ, երբ մարդը Աստուծոյ փոխադարձ տալիք ոչինչ ունէր: Դժմարիտ քրիստոնեան պէտք է այս չափանիշին համաձայն ապրի, Ոսկէ կանոնը: Արդեօ՞ք ակտիվ ենք: Արդեօ՞ք բարիք ընելու նախաձեռնող ենք: Բաւարար չէ չարիք չընելը: Եթէ ակտիվօրէն բարիք չենք ընէր, ուրեմն Ոսկէ կանոնը խախտած կ'ըլլանք եւ այդպիսով անհնազանդ կ'ըլլանք Աստուծոյ պատուիրանին:

Ռաֆֆի Չափարեան

Յիսուսը կը բժշկէ հիւանդներուն

Երբ Տէր Յիսուսը կը ճամբորդէր քաղաքէ քաղաք և գիւղէ գիւղ Ան յաճախ կը բժշկէր հիւանդներուն: Այս հրաշքներու լուրը շուտով կը տարածուէր ամէն կողմ: Ուստի, մարդիկ Իր բով կը բերէին անդամալոյծներուն, կոյրերուն, խուլերուն եւ շատ ուրիշ հիւանդներուն, եւ Յիսուսը բոլորին կը բժշկէր:

Արեւմտեան հասարակութեան մէջ բժիշկին այցելելն ու դեղատոմս ստանալը սովորական երեւոյթ է, սակայն աղքատ երկրներուն մէջ

սարսափելի է տեսնել, թէ կարիքատուրներն ու գիղացիները ինչպէս կ'արձագանքեն հիւանդութեանը:

Ամէն օր մեր գործակիցները կ'այցելեն մեր շատ աղքատ ընտանիքներուն՝ Զրիստոսով անոնց քաջալերելու համար: Անոնց ֆինանսական աջակցութիւն կամ սնունդի տոպրակներ կը տրամադրեն, եւ հոգ կը տանին, որ երեխաները ապահով ու առողջ են եւ ընտանիքը համերաշխութեան մէջ է:

Անգամ մը, երբ այցելեցին այդպիսի ընտանիք մը, նկատեցին, որ նորածինը հիւանդ էր՝ անկողնին մէջ պառկած: Մօրը կը հարցնեն, թէ որքա՞ն ժամանակ է ան հիւանդ է, ան ալ կը պատասխանէ ըսելով թէ՝ մօտ մէկ շաբաթ:

Մեր աշխատակիցը անմիջապէս մեքենայով կը տեղափոխէ զանոնք բժշկին մօտ, որը գիղէն բաւականին հեռաւորութեան վրայ կը գտնուէր: Բժիշկը զայրացաւ մօր անտարբերութեան վրայ, քանի որ մանուկը մէկ շաբաթ էր այդ վիճակի մէջ, եւ եթէ օր մը եւս ուշացնէին, ապա ան մահացած պիտի ըլլար:

Հարցեր կուգան մտքիս մէջ. արդեօ՞ք ան անհոգ մայր մըն էր, արդեօ՞ք չէր սիրէր իր զաւակին, արդեօ՞ք կանխամտածուած քայլ մըն էր ասիկա, որ մանուկը մահանար:

Հայաստանի խուլ ու հեռաւոր գիղերուն մէջ կը հանդիպիք ծայրաստիճան աղքատութեան. մարդիկ գումար չունին, սնունդ չունին, որոշ մայրեր հոգեկան խանգարում ունին նման պայմաններու պատճառով, բժշկին այցելելը թանկ հաճոյք է, դեղերը գումար արժեն, երթեւեկելու հնարաւորութիւն չկայ, իսկ չորս զաւակներ մեծցնող միայնակ երիտասարդ մայրը բժիշկ չի ճանչնար, որ իր զաւակին հոն տանէր:

Ամէն օր բազմաթիւ հեռախօսագանգեր կը ստանանք բժշկի անհապաղ այցի, դեղորայքի, երթեւեկելու, արեան կամ այլ անալիզներու ծախսերու համար: Կան շարունակական դեղորայքներ կամ հետազօտութիւններ, որոնք անհրաժեշտ են, եւ կը դժուարանանք անոնց խնդրանքը մերժելու մէջ, օրինակ՝ արեան բարձր ճնշումը, մաղձաճարպը (քոլեստրոլ) կամ շաքարախտը:

Կրեթելը վաթսուսն անց է, շաքարախտով կը տառապի: Բժիշկները անդամահատել էին ոտքի երկու մատները: Արիւնահոսութիւնը կրկին գլուխ բարձրացուցած էր եւ չէր դադարիր. վերջը շատ մեծ էր ու յստակ էր, որ վտանգ կար եւ անհրաժեշտ էր մասնագետի միջամտութիւնը: Բժիշկը խորհուրդ տուաւ օգտագործել սահմանուած դեղորայքը եւ ամէնօրեայ ներարկումները: Եթէ այս բոլորը անմիջապէս չընէր, ապա հնարաւոր էր, որ ստիպուած ըլլային ոտքը անդամահատել:

Մենք շնորհակալ ենք ձեր աջակցութեան եւ աղօթքներուն համար. արդէն երեք ամիս անցած է ու իր վերջը գրեթէ ապաքինուած է: Պետք է տեսնէք անոր դէմքին ժպիտը, եւ թէ ինչպէս փառք կուտայ Տէրոջը ու շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք նիւթապէս օգնեցին իրեն:

Ձեր օգնութեամբ ACM-ը նուիրուած է՝ կարիքաւորներուն ու աղքատներուն աջակցութիւն ցուցաբերելու մէջ: Եթէ կը փափաքիք մասնակցիլ այս ծառայութեանը, ապա կրնաք մեզ հետ կապ հաստատել ու ձեր նուիրատուութիւնը ուղարկել նշելով՝ «բժշկական կարիքներու համար» տողը, եւ թող Աստուած օրինէ Ձեզ բոլորիդ:

